

Վ. Ա. ՔՈՍՅԱՆ, Միջին հայերենի բառակապակցությունները, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1984, 214 էջ:

Լույս տեսավ Վ. Քոսյանի «Միջին հայերենի բառակապակցությունները» աշխատությունը. մինչև այդ հրատարակվել էին նրա «Ժամանակակից հայերենի բառակապակցությունները» (1975 թ.) և «Գրարարի բառակապակցությունները» (1980 թ.) ուսումնասիրությունները: Նկատի ունենալով, որ բառակապակցությունների տեսությունը և հարցի պատմությունը քննության են առնված «Ժամանակակից հայերենի բառակապակցություններում», հաջորդ աշխատություններում հեղինակը այլևս չի անդրադարձել այդ հարցերին:

Բառակապակցությունը երկու և ավելի բառերից կազմված կապակցություն է, որն արտահայտում է բաղադրիչների շարահյուսական՝ լրացում—լրացյալ հարաբերություն: «Միջին հայերենի բառակապակցությունները» գրքում հեղինակը համաժամանակյա կառվածքով քննել է միջին հայերենի խոսքի մասերի՝ գոյականի, բայի, մակբայի, դերանվան, նաև՝ ածականի, թվականի, դերբայների բառակապակցությունները, փաստական նյութը քաղելով XII—XVII դդ. պեղարվեստական, պատմական, բժշկագիտական գրականությունից, ձեռագիր հիշատակարաններից և այլ աղբյուրներից: Հեղինակը բոլոր դեպքերում նշում է միայն միջին հայերենին հատուկ բառակապակցությունները և առանձնացնում միջին հայերենից եղած շեղումները: Այսպես, օրինակ, գոյականի բառակապակցությունները քննելիս նա նշում է, որ գոյականը միջին հայերենում լրացումներ է ստանում բոլոր հոլովներով, նախդրավոր և նախադրությամբ կառույցներով, ածականով, թվականով, դերանուններով, դերբայներով, մակբայներով: Թվարկվում են համաձայնվող և չհամաձայնվող դեպքերը: Վ. Քոսյանն այնուհետև մանրամասն անդրադառնում է յուրաքանչյուր հոլովով դրվող լրացումների շարահյուսական—խմաստային հարաբերություններին, ցույց տալով գոյականի սեռական հոլովով դրվող հատկացուցիչ—հատկացյալ լրացումների արտահայտած իմաստները: Գոյականը լրացումներ է ընդունում նաև մյուս թեք հոլովներով ու նախդրավոր և նախադրությամբ կառույցներով, ինչպես, օրինակ, հանդիպումն քաղաւորին (տրականով), զմեկեկիս զեմումն (հայցականով), քաղաւորսքի ի ծաղովդեմէն (բացականով), բնութեսմբ միաթին (գործականով), ճաղադաթին ընդ խաւարի (նախդրով), զաւր ի վերայ գլխայն (նախադրությամբ):

Ածականով գոյականի լրացումները քննելիս Վ. Քոսյանը հատուկ ուշադրություն է դարձնում ածականի շարադասության վրա, թվարկում է համաձայնվող և չհամաձայնվող դեպքերը: Լվականով գոյականի լրացումները քննելիս ցույց է տրվում, որ թվականները ավելի շատ նախադաս են գործածվում և թվով ու հոլովով էլ համաձայնում են լրացյալին: Տարբերակված ձևով են ներկայացվում քանակական և դասական թվականներով գոյականի լրացումները: Գոյականի լրացում են դառնում բոլոր տեսակի դերանունները, և ամեն դեպքում նշվում են դրանց տարբերությունները գրարարից: Այստեղ կարևորն այն է, որ բացի ընդհանուր գործածության դերանուններից, հատուկ ուշադրություն է դարձվում միջին հայերենում ծագած դերանուններով (հանջեմ, հայեցեղ, այսինչ, եմեղ, իտայ, այոցեղ, այդցեղ, այլցեղ, ոչ ով և այլն) գոյականների լրացումներին (էջ 42—52):

Միջին հայերենում գոյականի լրացում են դառնում անորոշ, անցյալ, ենթակայական և հարակատար դերբայները, որոնք կատարում են հատկացուցչի և որոշչի պաշտոններ: Այսպես՝ կենալու ճարակ (հատկացուցիչ), հեծնելոյ ձի (որոշիչ), արին ճաւառացեղաց (հատկացուցիչ), յևա երից ամաց անցելոց (որոշիչ), ձեռնաց անէծք (հատկացուցիչ), ձեռնագրող եղբակազու, կուտ յիտակած (որոշիչ), բարբառած արին (էջ 53—57): Գոյականի լրացումներ են դառնում նաև ձևի, չարի և աստիճանի, ժամանակի մակբայները, որոնք լինում են որոշիչ և պարագա (էջ 57—59):

Գրքի երկրորդ գլխում քննվում են ածականի բառակապակցությունները: Ցույց է տրվում, որ ածականները լրացումներ են ստանում գոյականով (նաև նրան հարաբերակից դերանուններով), դերբայներով, մակբայով (և նրան հարաբերակից դերանուններով), ածականով: Մի-

չին հայերենում ածականները լրացումներ են ստանում հոլովով դարձրի սեռական, տրական, բացառական, գործիական հոլովներով, ինչպես նաև նախդրավոր կառույցներով, նախադրություններով ու թեք հոլովաձևերով: Ըստ հեղինակի վիճակագրության, ածականի բառակապակցություններից ամենից բարձր հաճախականություն ունի ածական ի-ծացյալան կառույցը: Օրինակ՝ եզր ի գիտութիւն (էջ 66—67): Ածականը լրացումներ է ստանում իբրև, ի վերայ, դիտել (գեղել, գիտ, գերել), զիև, ղէմ, ընդդէմ, որպէս, քան նախադրություններով կազմված կառույցներով (էջ 68): Միջին հայերենում ածականը ամենից շատ լրացում է ընդունում չափի և աստիճանի մակրաներով (և դրանք փոխարինող դերանուններով), ինչպես՝ կարի շարագոյն մարդ, խիստ ջրախառն գիւնի, կամ՝ հաւցեղ մեծ ջուղ, հաւց գեղեցիկ գլուխ, այնչափ գեղեցիկ հաւ և այլն: Երբեմն ածականն է դառնում ածականի լրացում, ինչպես՝ մեծ օգտակար գործ, աղէկ առողջ մարմին և այլն:

Աշխատության ամենածավալուն բաժինը «Բայական բառակապակցությունները» գլուխն է (էջ 74—204), որտեղ բայի լրացումները ներկայացվում են գոյականով, ածականով, թվականով, դերանուններով, դերբայներով, մակրայով: Գոյականներով լրացումները կարող են լինել կա՛մ առանձին հոլովաձևերով, կա՛մ նախդրավոր և նախադրութլամբ կառույցներով: Գոյականներ բայի լրացման դերում հանդես է գալիս տրական, հայցական, բացառական, գործիական հոլովաձևերով, նախդրների ու նախադրությունների զուգակցությամբ:

Ի տարբերություն գրաբարյան խնդրառության՝ միջին հայերենում բայի խնդրառությունը հանդես է բերում մեծ բաղմադանություն: Նախդրավոր խնդրառությունը փոխարինվում է ան-նախդր խնդրառությամբ, երբեմն էլ փոխվում է նախդրի գործածությունը: Հեղինակը մեկնում է ածականով և առնում առանձին բայերի կոնկրետ խնդրառության վրա: Միշտ առանձնացվում են յուրահատկությունները, ներություններն ու սխալ խնդրառության դեպքերը: Փաստական հարուստ նյութի միջոցով ցույց է տրվում, որ թեք հոլովներով դրված բայական լրացումները արտահայտում են խնդրային և պարագայական հարաբերություններ, երբեմն էլ համատեղում մեկից ավելի իմաստներ (էջ 89—93): Առանձին դեպքերում նշվում է նաև այս կամ այն բառակապակցության գործածության հաճախականությունը: Օրինակ, նա գրում է, որ բայի լրացումները տրականով արտահայտում են ավելի շատ խնդրային, քան պարագայական իմաստներ: Խնդրային իմաստներն են՝ հանգման, մատուցման, ջահի, հաղորդման, ընկալման, ուղղության (մտիկ անել մեկի), վերաբերության, սահմանափակման, համապատասխանության, փոխադարձ կապի, փոխարինության, միջնորդական խնդրի, ներգործող խնդրի, ուղիղ խնդրի, իսկ պարագայական իմաստներն են՝ նպատակի, պատճառի, տեղի, ժամանակի, վիճակի, ձևի (էջ 94, 101):

Միջին հայերենում բայի լրացումները հայցական հոլովով իմաստային ավելի լայն ընդգրկում ունեն, քան գրաբարում էր: Դրա պատճառը, ինչպես իրավացիորեն գրում է Քոսյանը, այն է, որ միջին հայերենում հայցականը շատ հաճախ գործածվում է գրաբարյան նախդրավոր և նախադրությամբ կառույցների փոխարեն: Նա եզրակացնում է, որ բայի խնդրառությունը խնդրառու լինելու պատճառով ունի միջին հայերենում (էջ 105): Միջին հայերենում ընդգրկվում են նաև հայցականի պարագայական կիրառությունների շրջանակները: Բայի լրացումները հայցական հոլովով արտահայտում են ժամանակի, տեղի, նպատակի, ձևի, չափի իմաստներ:

Բացառական հոլովով բայի լրացումներն ավելի շատ խնդրային հարաբերություն են արտահայտում, քան պարագայական: Խնդրային իմաստներն են՝ անջատման (զատման), խուսափման, պակասության, պահանջման, անձի-ելակետային, ելման-սկզբնական, ելման, նյութի, սերման (ծագման), ընդօրինակման, միջոցի, մասնական, մասնական-խնդրային, մասնական-ենթակայական, վերաբերության, հաղորդման, հանգման և ուղղության, ներգործող խնդրի, պասսիվ ներգործության, համեմատության, սահմանափակման, համապատասխանության: Պարագայական իմաստներն են՝ տեղի, ժամանակի, ձևի, հիմունքի, պատճառի, նպատակի:

Գործիական հոլովով բայի լրացումները նույնպես արտահայտում են ավելի շատ խնդրային, քան պարագայական իմաստներ: Այսպես՝ միջոցի, նյութի, ներգործող խնդրի, սահմանափակման, փոխարինության, պարագայական կամ հանգման, ձևի, վիճակի, համապատասխանության, միասնության, տեղի, ժամանակի, չափի, սատկացման, հիմունքի, նպատակի, պատճառի պարագայական իմաստները:

Հանգմանորեն ներկայացվում են բայի լրացումները նախադրությամբ կառույցներով: Նախադրությունները գործածվում են սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական հոլովաձևերի հետ: Ըստ որում նախադրությունների մեծ մասը դրվում է սեռական հոլովով նախադրության խնդրի հետ: Հեղինակն այնուհետև անդադառնում է նախադրությունների

գործածությանն ըստ հովվառության, ամեն դեպքում վեր հանելով ընդհանուր կանոնից եղած շեղումները: Նախադրությամբ կառույցներով արտահայտվում են խնդրային և պարագայական հարաբերություններ, որոնցում գերակշռում են պարագայականները: Խնդրային հարաբերություններն են՝ հանդման, մատուցման, ուղղության, շահի, վերաբերության, համեմատության, սահմանափակման, համապատասխանության, փոխադարձ կապի, անջատման, միջոցի, բացառման, փոխարինության, միասնության, իսկ պարագայականներն են՝ տարածական, ժամանակային, ձևի, վիճակի, պատճառի, նպատակի, չափի: Բացի նախադրություններից, միջին հայերենում գործածվում են նաև գրաբարյան նախդիրները (առ, ընդ, ըստ, ի, գ, ց), որոնցով արտահայտվում են զանազան հարաբերություններ: Հանգամանայից քննության են ենթարկվում յուրաքանչյուր նախդրի կիրառությունները, և փաստական հարուստ նյութի հիման վրա ցույց տրվում նախդրավոր կառույցներով բայի լրացումների խնդրային և պարագայական հարաբերությունները:

«Բայի լրացումները մակրայով» ենթարժնում քննվում են բայի լրացման դերում հանվեա եկող մակրայինքը միջին հայերենում, նշվում են մակրայների տարբերությունները ածականների, գոյականի հոլովածիներից, նախադրություններից:

Միջին հայերենում բայի լրացումներն են դառնում նաև ածականները, դերանունները, դերբայները, հազվադեպ՝ քանական ու դասական թվականները:

Գրքի շորորոգ գլուխը նվիրված է մակրայների, իսկ վերջինը՝ դերանվան բառակապակցությունների ուսումնասիրությանը:

Դիրքը գրված է գիտական բարձր մակարդակով, բայց երբեմն հանդիպում ենք մասնակի թերությունների և ոչ համոզիչ ձևակերպումների: Այսպես, օրինակ, վ. Քոսյանը գրում է. «Միջին հայերենում երևան եկած նոր նախադրություններից են բալտ, գնմ, քիմաց, ի քիմաց, ետև, գաղղ, գաղղի, գաղղ. գիշուի, իցնուր, ի դեմե, ի խեչ, ի տեչ, ի սեչ, ի վայր, ի վառ, ի վեր, վեր, համար, ի տակ. հանց, հուցգուց, յերեսաց, յառաջ, միեչև, միեչ, միեչի, շուրջանակի, աբիշ, ցած և այլն» (էջ 187—188): Այս ցանկում հանդիպում ենք նախադրությունների, որոնք գործածվում էին դեռևս V դարի մատենագրության մեջ (Ծղնիկ Կողբացի, Կորյուն, Ագաթանգեղոս, Աստվածաշունչ, Մ. Խորենացի և այլն): Այդպիսի նախադրություններից են յերեսաց, ի վեր, ի քիմաց, միեչ, միեչև, շուրջանակի, աբիշ, մի քանիսն էլ գրաբարում հանդես էին գալիս մի քիչ ալլ ձևով, այսպես՝ համար-ը՝ ի համար, յառաջ-ը՝ յառաջ քան, միեչի-ն՝ միեչ ի: Բերենք մի երկու օրինակ. «Եւ երկիր խախտեցա յերեսաց նորա» (Ագաթանգեղոս): «Բառականցարուք զդուլա շուրջանակի» (Աստվածաշունչ):

Հեղինակը երբեմն նշում է բառակապակցության երկու և ավելի իմաստների համատեղում, որն այնքան էլ համոզիչ չէ: Այսպես, 156-րդ էջում գրում է. «Հետ, ի հետ-տուրական կառույցով արտահայտվում է ձևի և միասնության խառն իմաստ»:

Օրինակներ՝ մարդն քանի մանուկ է, ի հետ մեղաց ջրջի (Վարդան Այգեկցի): Զմիտք մի՞ քողոր՝ շատ շաբի հետ ջրջի (ն. տ.): Այս օրինակներում, մեր կարծիքով, առկա է միայն միասնության իմաստը: Կամ 193-րդ էջում կարդում ենք. «Եթե նախադասության մեջ մակրայը գրվում է բայի և բայանվան միջև, ապա այն կարող է մեկնաբանվել ե՞րբ երբ պարագա, ե՞րբ որոշիչ, աչսինքն դիտվել ե՞ որպես բայի, ե՞ որպես գոյականի լրացում: Օրինակ՝ ձգեմե մանուկազ պահօք և աղօթիք (Կ. Գանձակեցի):» Ըստ իս մենք այստեղ գործ ունենք միմիայն պարագայի հետ:

Հայերենի գրական փուլերի բառակապակցությունների ուսումնասիրությունն ամբողջացնելու նպատակով ցանկալի է հրապարակի վրա տեսնել նաև վ. Քոսյանի արևմտահայ գրական հայերենի և հայերենի բառակապակցությունների պատմական զարգացմանը նվիրված ուսումնասիրությունները:

«Միջին հայերենի բառակապակցությունները» աշխատությունը կարող է օգտակար լինել ոչ միայն հայոց լեզվի պատմությամբ զբաղվողներին, այլև հայոց լեզվի հարցերով հետաքրքրվողներին առհասարակ:

ԳԵՎՈՐԳ ԹՈՍՈՒՆՅԱՆ

Թեոսոփիական գիտությունների քննաձև: